



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material





Ք 27

ԲՃ. Ա. ԲՈՒԳՈՒՂԵԱՆ.

ԻՆՉ Է ԿԱՇՈՒ ԿԻԱՆԴՈՒԹԻԿՆԸ

1 ՊԱՏԿԵՐՈՎ,

Ս.-ՊԵՏԵՐՈՒՐԳ,

«ՊԵՇԿԵՆԵՆ ԵՐԵՎԱՏԻՊ» ՏՊԱՐԱՆ
ԼԵՆՏՈՒԳՈՂ ՓՈՂՈՑ, Տ. 4.

1902

616
P. 91.

616 պ
Բ-91

ԲԺ. Ա. ԲՈՒԿՈՒՂԵԱՆ.

ՊԱՏՐԱՍՏԻՈՒՄ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՃԱՄԱՐ ԿՈՅՆ ՇԵՂԻՆԱԿԻ
ՇԵՏԵԻԱԼ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

1. Արհրագործը, թէ բանւորը:
2. Ի՞նչ է իրաւունքը և բարոյականութիւնը:
3. Ի՞նչ է պտնիկութիւնը:
4. Սէր և խանդ:
5. Հիւանդութիւնը և բակտերիաները:
6. Միֆիլիս և ամուսնութիւն:
7. Բնութեան ոյժը, որպէս բժիշկ:
8. Արեխաների բնաւորութիւնը:
9. Սով և ոճրագործութիւն:
10. Աինը և հասարակութիւնը:
11. Ստամոքսի և աղիքների հիւանդութիւնը:
12. Սեռական զգացմունքը:
13. Սնտիապաշտութիւն և գիտութիւն:

ԻՆՉ Է ԿԱՇՈՒ ՋԻԻԱՆԴՈՒԹԻՒՆԸ



1. Կաշու նշանակութիւնն ու ֆիզիոլոգիան:
2. Կաշու վրայ ի՞նչ տեսակ դուրս-տուածներ են լինում:
3. Դուրս-տուածների պատճառն ու ծագումը:
5. Դուրս-տուածների մեծ մասը կախումն ունի ներքին և ջղային հիւանդութիւններից:
4. Ի՞նչ է նախատրամադրութիւնը:
6. Անցադալարութիւն և կաշու առողջապահութիւն:
7. Մաղերի առողջապահութիւնը:

18015
2002

1 ՊԵՏԿԵՐՈՎ



Ս.-ՊԵՏԵՐՐՈՒՐԳ
«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ԱՐԱԳԱՏԻՊ» ՏՊԱՐԱՆ
1902



11.03.2013

4741

29 JUL 2010

Дозволено цензурою. С.-Петербургъ, 28 Марта 1902 года.



1. Գրանասրկերը. 2. Ճարպաբերը. 3. Մար. 4. Ճարպաբերն իսպ. 5. Մարի սիրունը. 6. Արտան անոթները:

«Աղտոտ մարդը ամեն տեսակ հի-
ւանդութիւններէ որսն է»:

«Մարդն ու բոբբոսը միասին ապրել
չեն կարող—այնտեղ՝ ուր անհե-
տանում է մէկը, միւսն է զարգա-
նում»:

«Մաքրութիւնը իսկական առողջու-
թիւն է կամ դրա հիմքը»:

Կաշին այն օրգաներից մէկն է, որոնք ամենից աւելի
մատչելի են անմիջական քննութեան ու հետազոտութեան:

Մի քանի դէպքերում կաշու հիւանդութիւնները
առաջ են գալիս արտաքին զանազան ազդեցութիւններից,
որոնք ներգործութիւն են ունենում իրենց տեղում:

Այսպիսի դէպքերում հիւանդութիւնն էլ սովորաբար
տեղական է լինում:

Երբեմն էլ կաշու հիւանդութիւնները կազմում են
ընդհանուր տկարութեան մի արդիւնք կամ ներքին այս
կամ այն գործարանի հիւանդութեան հետեանք:

Իր տեսակ-տեսակ փոփոխութիւններով կաշին հայե-
լու նման արտայայտում է մարմնի հիւանդոտ վիճակը:

Պարզել այս գիտական ճշմարտութիւնները, ցոյց
տալ նրանց նշանակութիւնը—**ահա այս է լինելու գրքոյ-**
կիս բովանդակութիւնը:

Թող սա մի անգամ էլ հաստատէ, որ մարմնի ու
հոգու մաքրութիւնը առողջութեան հիմքն է կազմում:

Այն, մաքրութիւնը առողջացնում է մարդուս...

Բժ. Ա. Բուրուդեան:

Ս.-Պետերբուրգ, 1902 թ.

Ա.

Կաշու գերը շատ նշանաւոր է, բայց նրա վրայ
բոլորովին խնամք չի տարւում:

Էլ ինչո՞ւ զարմանանք, երբ թոյների (աւտո-
տոկսին) մեծ մասը, որ սովորաբար դուրս է գալիս
կաշու միջով, մնալով մարմնի մէջ՝ ամեն տեսակ
խանգարումների պատճառ է դառնում:

Այդ թոյները արամադիր են դարձնում մար-
դուս զանազան հիւանդութիւններ ստանալու, իսկ
ամենից աւելի նեարդային համակարգութեանն են
փնասում:

Կաշին ամենակարեւոր զգայարանքներից է և
մեծ խնամք է պահանջում:

Կաշին ծառայում է մարդուս իբրև շոշափման
գործարան, միևնոյն ժամանակ նա շնչառութեան
մի օժանդակ գործարան էլ է:

Կաշին նոյնպէս դուրս է հանում մարմնից
զանազան թոյներ և կանոնաւորում է մարդուս
մարմնի ջերմութեան կորուստը:

Եթէ նա չունենար մի այսպիսի նշանաւոր
յատկութիւն, մարդս չէր կարողանայ տանել կլի-

մայական խիստ փոփոխումները, չէր կարողանայ
դրանց դէմ մաքառել:

Վերջապէս կաշին ձարպ է դուրս հանում:

Այդ բոլոր վնասակար նիւթերը արտաքսուում
են մարմնից կաշու մէջ տարածուած բազմաթիւ
գեղձերի միջոցով:

Ամեն մի գեղձ ունի խողովակ, որ դուրս է դալիս
կաշու մակերևոյթի վրայ առանձին բացուածքով—
ծակով:

Սաստիկ քրտնելու ժամանակ մարդս աւելի
քիչ է միղում:

Պարզ է, որ կաշու գործունէութիւնը զօրեղաց-
նելով, կարող ենք փոքր ինչ թեթեւացնել երիկա-
մունքի ծանր աշխատանքը:

Ընդհակառակը կաշու գործունէութիւնը
ձնշելու ժամանակ երիկամունքները պէտք է ուժից
վեր աշխատեն, ուժասպառ լինեն, հետեւապէս են-
թարկուեն չափազանց վտանգաւոր հետեւանքների:

Ահա մի օրինակ.

Մի երեխայ եկեղեցական հանդէսի ժամանակ
պէտք է հրեշտակ պատկերացնէր:

Իրա համար նրա կաշին լաքով ծածկեցին ու
վրան օսկեայ թիթեղներ կայրին, բայց մի քիչ
յետոյ երեխան մեռաւ:

Ուրեմն հասկանալի է, որ կաշու ծակօտիների
փակելը դէպի կորուստ է ասնում և հաւանօրէն
ինքնաթունաւորման պատճառ դառնում, որով-
հետեւ այդպիսի դէպքում թունաւոր նիւթերը չեն
կարողանում իրանց բնական ուղիով դուրս գալ:

նրանք մնում են մարմնի մէջ և վնասներ պատճա-
ռում:

Ճիշտ այդպէս մահ առաջանում է և այն ժամա-
նակ, երբ կաշու մեծ մասը այրուում է:

Ընդհանրապէս ծակօտների փակուելը, նոյն
իսկ մի մասի, սաստիկ վնասում է կաշուի գործու-
նէութեանը և մարդու մարմնի մէջ առաջանում է
մի ամբողջ շարք վտանգաւոր հիւանդութիւններ:

Առհասարակ ծակօտիները փակուում են, երբ
կաշու մակերևոյթը ծածկուում է կեղտով, իսկ այդ
կեղտը առաջ է դալիս քրտինքի չորացած մնացորդ-
ներից, ձարպից ու կաշու թողած թեփերից:

Եթէ կեղտը չհեռացնենք, նա կլցնէ ծակօտ-
ները և այդպիսով կթուլացնէ կաշու արտահանող
գործունէութիւնը:

Ուրեմն կաշու ծակօտների փակուելը կեղտո-
տութեան հետեւանքն է, հէնց այդ պատճառով էլ
նա շատ վատ հոտ է առաջացնում:

Կաշու մաքրութեան վրայ անպատճառ մեծ
ուշադրութիւն պէտք է դարձնել. մաքուր պէտք է
պահել ոչ միայն մարմինը, այլ և բոլոր զգեստը:

Իզուր չէ, որ սպիտակեղէնը փոխելով ու լուա-
նալ տալով («մեր տեղը բաղանիք ենք ուղարկում
նրան»):

Սպիտակեղէնը շատ շուտ է կեղտոտուում և
իր կողմից սկսում է կեղտոտել նաև մեր մարմինը:

Սպիտակեղէն փոխելու միջոցով մենք կողմնակի
կերպով մաքրում ենք կաշին, բայց այդ դեռ բաւա-
կան չէ:

Դա միայն հնաւորութիւն է տալիս ուղղակի մաքրելը աւելի ուշ-ուշ կատարել:

Բացիյաճախ սպիտակեղէն փոխելը, անհաժեշտ է նաև մարմինը ջրով շփել ու լաւ լուսացուել:

Կաշին մի շատ լաւ յատկութիւն ունի՝ նա շատ անհամեստ է, գաղանիք պահել չգիտէ, կպատմէ իր տիրոջ բնաւորութեան, առողջութեան, կենցաղավարութեան ու ներքին գործարանների մասին շատ ու շատ բաներ:

Կաշու վրայ կարող ենք կարգաւ, թէ մարդս մաքրութիւն ու կարգ-կանոն սիրում է, թէ ոչ:

Շօժա է զարթնում նրա ամօթն ու երկիւղը և այլն:

Կաշու միջոցով կարող ենք իմանալ ներքին գործարաններից շատերի՝ ստամոքսի, սեռական գործարանների և սրտի դրութիւնը:

Օրինակ՝ մի հիւանդ, որ ունի կապտադոյն շրթունքներ և առնասարակ կապտաւուն կաշի, գանգատում է, որ դժուար է շունչ քաշում, ախորժակ չունի, ստամոքսը ճնշում է և այլն:

Քննում ես նրան և բանից դուրս է գալիս, որ սրտի արատից խանգարուել է արեան շրջանառութիւնը մարմնի մէջ:

Մի ուրիշ օրինակ. եթէ սակաւարիւն, դունառ և ուռած կոպերով մի հիւանդ գանգատում է, որ իրան թոյլ է զգում, որ աշխատելիս շուտ է յոգնում, այս հանգամանքը առիթ է տալիս բժիշկին մտածելու, թէ հիւանդի երիկամունքները վնասուած

են, որից և առաջ է եկել կաշու դունառութիւնը՝ դեղնութիւնը:

Նմանապէս քթի, վերին շրթունքի, ականջի էկզեման գեղձախտի (զըրտուխա) հետեանքն է:

Եթէ գեղձախտի ժամանակ հիւանդութեան բուն պատճառի՝ գեղձախտի վրայ ուշադրութիւն չդարձնենք, այլ բժշկենք միայն կաշու ցաւը՝ էկզեման, մենք հիւանդութիւնը միայն ծածկած կլինենք, այն էլ ոչ երկար ժամանակով:

Մահրաժեշտ է այդ հիւանդութեան հիմքը՝ գեղձախտը բժշկել:

Հարկաւոր է լաւ սնունդ, թարմ օդ, դիւղական կեանք, աղի վաննաներ, ձկան իւղ և այլն:

Միւսնոյնը կարելի է ասել հիւանդութիւնների վերաբերմամբ, օրինակ՝ սիֆիլիսի, դեղնութեան (սարալըխ), բորոտութեան, կայծոռիկի—չկպանի (ֆորունկուլ) մասին:

Ս, յսպէս ուրեմն շատ անգամ ներքին տկարութիւնները կաշու հիւանդութիւնների պատճառ են դառնում:

Ներքին գործարանների փոփոխութիւնները մեծ ազդեցութիւն ունեն կաշու վրայ:

Կաշու արտաքին փոփոխութիւնները դիտելով և ուսումնասիրելով, շատ անգամ բացատրում է ներքին հիւանդութեան երեւոյթը. իսկ ինչ որ կատարում է կաշու վրայ՝ այն քիչ թէ շատ մատչելի է մարդկային դիտողութեան համար:

Բ.

Աւելի մանրամասն բացատրենք կաշու կազմութիւնն ու նշանակութիւնը:

Մեր ամբողջ մարմինը ծածկող կաշին, չնայելով իր չնչին հաստութեան, կազմուած է շատ շերտերից, բայց դրանցից գլխաւորները երկուս են. վերին շերտը՝ վերնամաշկ և ներքին՝ իսկական կաշին:

Վերին շերտը համարեա թէ անթափանցելի է, ինչպէս հեղուկների, նոյնպէս և զանազան գազերի համար. կարծես նա մարմնի պաշտպանն է բնութեան արտաքին վնասակար ազդեցութիւնների դէմ:

Իսկ ինքը՝ իսկական կաշին բաղկացած է երկու շերտից՝ դրսի և ներսի (խոր):

Ամբողջ կաշին, բացի ավերից, կոպերից և ոտքի տակերից, ծածկուած է տեղ-տեղ խիտ (օրինակ գլուխը, կզակը և այլն), իսկ տեղ-տեղ նոսր մազերով:

Մազը երկար գլանաձև կամ տափակ մի թել է, որ ամրացած է մազային պոկերի մէջ. դրանք մանր ու փակ պարկեր են ուռուցիկ տակով, որի մէջ իր լայն հիմքով նստում է մազը:

Մազային պարկի կողքին բացւում է և մի ուրիշ փոքրիկ պարկ, որ ճարպ է արտադրում մազերի և կաշու համար. այդ պատճառով մազերը միշտ կարծես մի քիչ իւղոտ են լինում:

Կաշու վրայ մազոտ տեղերում մենք տեսնում ենք անհամար մանր բացուածքներ կամ ծակոտներ:

Որտեղ որ բոլորովին մազ չի բուսնում (ափ, ոտքի տակ, կոպ), այնտեղ ծակոտներ չկան:

Իւրաքանչիւր մազի թելին կպած է մի փոքրիկ մկան, որ և շարժում է նրան:

Երբ մարդս հանգիստ է և կաշին էլ բնական պրութեան մէջ, մազերը ընդհանրապէս պառկած են լինում կաշու վրայ, մի որևէ ուղղութեամբ:

Բայց երբ երկիւղից կամ ցրտից կաշին կծկւում է՝ ձգւում են նոյնպէս և մկանունքները և մազերն էլ կաշու վրայ ուղղահայեաց, կամ ուրիշ խօսքով ասած՝ ցից-ցից են կանգնում:

Սյուպիսի դէպքերում կաշին դեղնում է, նրա վրայ դուրս են գալիս բնական կաշուի գոյնով մանր ուռուցքներ և ամբողջ կաշին նման է լինում փեռած սագի կաշուն — «սագի կաշի»:

Բացի այս ամենից՝ կաշու մէջ կան նաև խիտ ոլորուն մանր խողովակներ, որոնց բերանը բացւում է նոյնպէս կաշու վերայ. դրանք քրախնք արտադրող գեղձերն են:

Շան կաշու մէջ այդպիսի գեղձեր չկան, բայց այդ տեսակ գեղձերի նման մի բան կայ նոյա բերնի ու լեզուի լորձաթաղանթի մէջ. այդ պատճառով էլ շան մարմինը չի քրանում, այլ բերանն ու լեզուն:

Սյւ միևնոյն պատճառով էլ շունը սաստիկ յոգնածութեան դէպքում լեզուն դուրս է հանում:

Քրտինքի նշանակութիւնը շատ մեծ է:

Նրա հետ մարմնից դուրս են գալիս շատ աւելորդ նիւթեր, ինչպէս որ այդ բանը կատարւում է երիկամունքների ու թոքերի միջոցով:

Սյրպէս ուրեմն կաշին էլ արաաթորող մի դործարան է:

Կաշին քրտնելիս մարմինը ազատուում է աւելորդ ջերմութիւնից, ուրեմն այդ դէպքում էլ կաշու նշանակութիւնը մեծ է:

Եթէ ծակենք մատի կաշուի վերին շերտը, այն ժամանակ ոչ ցաւ կզգանք և ոչ էլ արիւն դուրս կգայ: Երեխաները շատ անգամ խաղում են՝ ասեղով կաշու վերին շերտը ծակելով:

Պարզ է ուրեմն, որ կաշու վերին շերտում չկան ոչ արիւնատար անոթներ և ոչ էլ զգայական նեարդեր:

Բայց եթէ ծակենք իսկական կաշին, այն ժամանակ ցաւ էլ կզգանք, արիւն էլ դուրս կգայ. սրանից կարելի է եզրակացնել, որ իսկական կաշու մէջ գտնուում են արիւնատար անոթներ ու զգայական նեարդերի վերջաւորութիւններ:

Եւ այսպէս իր բարդ կազմութեան շնորհիւ կաշին մեծ դեր է խաղում մարդու մարմնի մէջ:

ա) Նա պաշտպանում է մարմինը բնութեան արաաքին փնասակար ազդեցութիւններից:

բ) Արաաթորում է շատ փնասակար նիւթեր:

գ) Ազատում է մարմինը աւելորդ ջերմութիւնից և

դ) ծառայում է իբրև շոշափելիք:

Վերջապէս պնդում են, թէ կաշին ծառայում է մասամբ նաև իբրև շնչառութեան դործարան:

Բայց այդ խնդիրը դեռ վերջնականապէս վճռուած չէ:

Սակայն վերև յիշուած ծառայութիւններն էլ բաւական են համոզուելու համար, թէ այդ դործարանը մարդու առողջութեան համար որքան մեծ նշանակութիւն ունի:

Կաշու հիւանդութիւնը, կարելի է ասել, միշտ ազդում է ամբողջ մարմնի վրայ, ուստի ով որ կամենում է պահպանել իր առողջութիւնը, պէտք է հոգ տանի կաշու վրայ:

Կաշու հիւանդային փոփոխութիւնները կամ կաշու արտադրութիւնը:

Այսպիսի հիւանդային երևոյթներ ունին զանազան տեսակ բնորոշ ձևեր, որոնք իրարից զանազանուում են թէ գոյնով և թէ ուրիշ նշաններով, անատոմիքական փոփոխութիւնների համեմատ:

Կաշու հիւանդային փոփոխութիւնները լինում են երկու տեսակ:

Առաջին տեսակի փոփոխութիւնները հիւանդութեան առաջին և անմիջական նշաններն են. այսպէս.

ա) Ցան կամ էկզանտեմա.

բ) Կարմրութիւն.

գ) Բիծ՝ բառիս բան նշանակութեամբ.

դ) Զուր պարունակող կամ առանց ջրի հանգոյցներ.

ե) Բշտիկներ.

զ) Դատարկ կամ թարախոտ խոցեր.

է) Թեփ և այլն և այլն:

Երկրորդ տեսակի փոփոխութիւնները կամ առաջինների հետեանքն են լինում կամ առաջ են

գալիս պատահական պատճառներից, օրինակ՝ վերա-
ւորուելուց:

Իրանց թուին պատկանում են կաշու պրոկուելը,
քերթուելը, վէրքերը, սպիները և այլն:

Իսկական ցանր կամ էկզանտեման լինում է
քիչ թէ շատ տարածուած կամ սահմանափակ:

Նա նկատելի կերպով չի դուրս գալիս կաշու
վերայ:

Ցանր ունենում է զանազան մեծութիւն. ամենա-
փոքրը՝ ոսպի չափ է լինում, իսկ ամենամեծը՝ եղուն-
դի չափ. օրինակ կարմրուկի, սիֆիլիսի, տիֆի
(նարինք) և այլ այսպիսի հիւանդութիւնների ժա-
մանակ:

Իսկ երբ ցանր լինում է ընդարձակ տարածու-
թեան վրայ, մեծ մասամբ առանց որոշ գծադրու-
թեան ու սահմանի, այն ժամանակ կոչւում է բոր-
բոքուած կարմրութիւն, բառիս բուն նշանակու-
թեամբ, օրինակ քութեշի (սկարլատինա) ժամանակ:

Երբ կաշու տակ մի որ և է տեղում արիւն է
թափւում, այն ժամանակ առաջ են գալիս բաց
կարմիր բծեր, որոնք մատով սեղմելիս չեն անհե-
տանում:

Նրանք մի երկու շաբաթից յետոյ իրանք
իրանց են անցնում:

Հանդոյցները փոքրիկ և կարծր ուռոյցներ են՝
առանց հեղուկի, սահմանափակ:

Իրանք իրանցից յետոյ սպի չեն թողնում, ինչ-
պէս և վերոյիշեալ առաջին երկու ձևերը:

Հանդոյցները լինում են տափակ, կոնաձև,
փայլուն, կիսաբոլորակ:

Նրանց գլուխները երբեմն կծեպւում են:

Նրանց դոյնն ու մեծութիւնն էլ շատ փոփո-
խական է:

Բշտիկները կաշու վերին շերտի բոլորովաձև
և սահմանափակ բարձրութիւններն են, թափանցիկ
հեղուկով լցուած:

Բշտիկները կարող են լինել կորեկանման, նոյն
իսկ աչքի համար անտեսանելի, գնդասեղի գլխի
չափ կամ աւելի մեծ:

Խոշոր բշտիկները պարունակում են ջրանման
հեղուկ, թարախ կամ աքիւնախառն հիւթ:

Թարախոտ խոցերը—պուստուլա— կաշու վերին
շերտի կլոր բարձրութիւններն են, որոնք թարախոտ
հեղուկ են պարունակում իրանց մէջ:

Աւելի խոր նստած բշտիկները իրանցից յետոյ
հետքեր են թողնում, օրինակ ծաղկեր:

Թեփ կոչւում են կաշու վերին շերտի կամ
վերնառեշկի կծպուած մասերը:

Երբեմն թեփը լինում է շատ մանր ու բարակ՝
ճիշտ այլևրի թեփի նման, երբեմն էլ շատ խոշոր
կտորներով:

Կաշու թեփոտուելը կարող է հիւանդութեան
առաջին շրջանը լինել, բայց կարող է լինել նաև
երկրորդ շրջանի երևոյթ:

Հալարները (տուբերկուլները) մեծ մասամբ բոլ-
րակաձև գուրս ընկած բարձրութիւններ են:

Նրանց զարգացման ընթացքը շատ գանդաղ

է լինում և նոքա շատ անգամ իրանցից յետոյ հետքեր են թողնում (օրինակ լուպուսը (lupus), բորոտուլթիւնը, սիֆիլիսը և այլն):

Գումմային ուռոյցները պարզ արտայայտուում են կաշու մակերևոյթի վերայ. նրանք բոլորակաձև են և արամադիր են լինում կենդրոնում թարախտուելու կամ աւելի ծիշան սասձ՝ թարախանման հեղուկով լցուելու և ապա ծակուելու («գումմայ»):

Սյապիսի դէպքերում նրանք խոր վերքեր են առաջայնում և իրանցից յետոյ անջնջելի սպիներ թողնում:

Սակայն գումմային ուռոյցները երբեմն անցնում են առանց որ և է հետեանքի, եթէ իհարկէ գործադրուում են բժշկական միջոցներ, ինչպէս օրինակ սիֆիլիսի ժամանակ:

Գ.

Կաշու հիւանդութեան երկրորդ տեսակի փոփոխութիւններին պատկանում են չորացած խոցիկները և նրանց կձեպները, որոնք առաջ են գալիս թարախի կամ արեան թանձրանալուց կաշու վրայ:

Սյդ խոցիկները լինում են մեծ մասամբ անկանոն ձևով, իսկ երբեմն կլոր կամ ձուլաձև, քիչ կարծր կամ ընդհակառակը:

Նոցա գոյնն էլ զանազան է լինում, սկսած բաց դեղինից մինչև մոխրագոյնն ու սևը:

Քերծուածներ առաջ են գալիս կաշու նիւթի կորստից, վերաւորուելուց:

Սյդ դէպքում վնասում է միայն կաշու վերին շերտը, բայց երբեմն և աւելի խորը:

Ընդհանրապէս կաշու քերծուածներն առաջ են գալիս սաստիկ քորից, օրինակ քոստուլթեան ժամանակ—չեսոտից, որը առաջ է գալիս առանձին տեսակ միջատներից:

Խոցերը առաջ են գալիս որ և է հիւանդութեան պատճառով:

Եթէ վերքի գործողութիւնը խորն է հասնում և վնասում է բուն կաշուն, այդ դէպքում վերքից յետոյ միշտ սպի է մնում (շանկր):

Սյդ սպիները արժանի են լուրջ ուշադրութեան՝ բուն հիւանդութիւնը որոշելու տեսակէտից. օրինակ՝ լուպուսի, սիֆիլիսի և ուրիշ հիւանդութիւնների ժամանակ:


Կաշու ձեղքուածները տարբեր ձևերով և տարբեր խորութեան երկար պատուածքներ են:

Ընդհանրապէս շատ դժուար է այդ բաները հասարակ ձևով բացատրելը, որովհետև կաշու հիւանդային փոփոխութիւնները չափազանց բարդ են և խառը:

Կաշու հիւանդային արտայայտութիւնները կամ հաստ հաստ են լինում, կամ տարածուած գանազան տեղերում, լինում են նաև մանր—ցրուած կէտերի նման, երբեմն էլ կաթիլների ձև են ընդունում:

Պատահում է նաև, որ կաշու տարբեր հիւանդութիւնները, իրար շատ մօտ լինելով խառնուում են միմեանց հետ և շրջանի, կիսաշրջանի և կամ ծուռ գծերի ձևեր են ընդունում:

ԿՐՈՒՄ



Հասկանալի է ուրեմն, թէ որքան բազմակերպ են կաշու հիւանդութիւնները. նրանք կարող են լինել՝ չոր կամ թարախոտ, թեփոտ, դեղնագոյն կամ բաց կարմիր, ցրուած, կանտնաւոր գծերով կամ անկանոն և այլն և այլն:

Աւելի պարզ ասած՝ կաշու հիւանդութիւնները զանազան ձևի, դրութեան և գոյնի են լինում և այդ բոլոր երեոյթները պէտք է ի նկատի ունենալ հիւանդութիւնը որոշելու և կանտնաւորապէս բժշկելու համար:

Կաշու հիւանդութիւնների մեծ մասը բորբոքումից է առաջանում, ուստի պէտք չէ անտես առնել բորբոքման երեոյթները, որովհետև զրանք մեծ դեր են խաղում:

Շատ մեծ ուշադրութեան արժանի են այն փոփոխութիւնները, որոնց ենթարկւում են կաշու հիւանդութիւնները բորբոքման ազդեցութեամբ:

Կաշու հիւանդութեան զանազան նշանները բորբոքումից կարմրում են, ուռչում, միանում և այդ պատճառով նրանք իսկականից աւելի մեծ են երևում:

Իսկ եթէ բորբոքումը նուազում է և կամ բոլորովին անհետանում—հիւանդութեան նշանները աւելի գունատուում, աւելի փոքրանում են:

Դ.

Կաշու հիւանդութիւնները շատ փոփոխական զգայմունքներ են զարթեցնում մարդկանց մէջ:

Հիւանդը երբեմն տաքութիւն է զգում, երբեմն ծակծկոց ու սեղմում:

Կաշին երբեմն բոլորովին անզգայ է դառնում, երբեմն էլ սաստիկ զգայուն:

Ամենից յաճախ հիւանդը զգում է սաստիկ քոր, որ երևում է որոշ ժամանակամիջոցում՝ կամ պարբերաբար և կամ բոլորովին անկանոն կերպով:

Այդ հարցում բաւական մեծ դեր է խաղում տաքութիւնը և ընդհանրապէս ջերմութեան փոփոխութիւնը:

Այդպիսի դէպքում մարմնի մաքրութեան պահանջը այնքան զգալի է դառնում, որ հիւանդը սաստիկ վիշտ է զգում երբ չէ կարող այդ կատարել:

Շատ դէպքերում քորելը սաստկացնում է ցաւելը և բարդացնում է հիւանդութիւնը, որը աւելի տարածւում ու երկարում է:

Բայց երբեմն էլ պատահում է, որ քորը դադարում է, Հէնց որ վերնամաշկը պրոկուում է:

Շատ անգամ մեր կաշին քոր է գալիս ինքն իրան, առանց որ և է ցանի և այդ կարող է շարունակուել և մինչև անգամ աւելի ևս սաստկանալ նոյն իսկ այն ժամանակ, երբ կաշու հիւանդութիւնն արդէն բոլորովին անցել է:

Կաշու քոր դալու անմիջական հետեանքը լինում է վերնամաշկի պրոկուելը—վերաւորուելը:

Եթէ քորը շուտ է անցնում—միայն մի քանի օր է տևում, այն ժամանակ ամեն ինչ կվերջանայ նրանով, որ մեր կաշու վերայ կմնան եղունգով չանդրատւած, քերծուած տեղեր. եթէ այդ քերծւածները մինչև ներքին կաշին հասած լինեն, այն ժամանակ իբրև հետեանք արտաքին սպիներ կմնան:

եւ, յիրաւի, եթէ կաշու մի որոշ կէտը ենթարկուում է մշտական զրգուման, դրա անմիջական հետեւանքը կլինի նրա փոփոխութիւնը, վերնամանշկի երկարատե—քրոնիքական բորբոքումը:

Բայց դրանից այսպէս մեծ դեր են խաղում կաշու հիւանդային այն փոփոխութիւնները, որ առաջ են գալիս միայն խոշորացոյցով տեսանելի մանր պարազիտներից: *)

Սյդ պարազիտները մանր—օրգանիզմները զանազան ձևեր ունեն, օրինակ՝ փոքրիկ գնդակների, ուղիղ գծերի և այլն:

ե.

Ուսուցմասիրելով կաշու հիւանդութիւնները նոցա ծագման տեսակէտից, հեշտութեամբ կհամոզւինք, թէ կան մի շարք որոշ, այսպէս ասած՝ բնածին հիւանդութիւններ, որոնք ծնուում են երեխայի հետ միասին:

Նոցա իսկական ծագումը դեռ ևս անցայտ է:

Կաշու ոչ բնածին, այսինքն ստացական հիւանդութիւնները, իրանց ծագման համեմատ կարելի է բաժանել երկու մեծ խմբի:

1) Այսպէս կոչուած՝ բնատառական (իդիոպատիքական) հիւանդութիւններ, որոնք առաջ են գալիս արտաբուստ՝ անմիջապէս վերնամանշկի վրայ ներգործող պատճառներից:

2) Այսպէս կոչուած՝ նշանական (սիմպտոմատիքական) կաշու հիւանդութիւններ, որոնք հետե-

*) Տես Մարտ 1901 թ. № 7. «(Ղի փոշին»): և Բժկ. Վ. Լրծրունի «Արակիչ հիւանդութիւնները և նրանց թոյնը»:

ւանք են ամբողջ օրգանիզմի վրայ ներգործող հիւանդաբեր պատճառի:

Բնատառական (իդիոպատիքական) հիւանդութիւններն առաջ են գալիս երկու պատճառներից, ա) պարազիտներից և բ) քիմիական, ֆիզիքական և ուրիշ արտաքին զրգոեցուցիչ տեղական միջոցներից:

Նայելով պարազիտների տեսակին, նրանց պատճառած հիւանդութիւնն էլ գլխաւորապէս երկու տեսակ է լինում՝ կենդանական պարազիտից առաջացած հիւանդութիւն և բուսական պարազիտից ծագած հիւանդութիւն:

Կենդանական պարազիտից առաջ եկած հիւանդութիւնները մեծ մասամբ լաւ յայտնի են:

Կան այնպիսի պարազիտներ, որոնք ապրում են կաշու մակերեսային վրայ, բայց նրա մէջ չեն մտնում, այսպէս են՝ գլխի, մարմնի ոջելը, միուկը, լուն, մոծակը և այլն:

Բայց կան պարազիտներ, որոնք մտնում են վերնամանշկի խորը և մինչև անգամ բուն կաշու մէջ, օրինակ՝ քոստաութեան ծեաուկը:

Աւելի չերկարացնելու համար չենք խօսիլ կաշու ուրիշ շատ հիւանդութիւնների մասին, որոնց ծագումը նոյնպէս վերագրում են պարազիտների, թէև այդ պարազիտները դեռ լաւ յայտնի չեն:

Նոյնպէս շատ քիչ հետազոտուած են կաշու այն հիւանդութիւնները, որոնք ծագում են միկրոբներից:

Առ այժմ որոշուած են միայն բորոտութեան,
լուսուսի, կաշու տուբերկուլոզի և այլն բացիւները:

Պարզ է, որ պարագիտից հիւանդանալու առա-
ջին պատճառը ուրիշեց, այսինքն հիւանդ մարդուց,
անասունից վարակուելն է, կամ անմիջապէս միկրո-
ներ փոխադրելով և կամ կողմնակի կերպով հիւան-
դութեան ծագման սկիզբը դնելով:

Բայց պէտք է նկատել, որ վարակուածների
գրութիւնը միատեսակ չի լինում, ոմանց հիւանդու-
թիւնը աւելի թեթեւ է անցնում՝ իրանց կազմու-
ածքի շնորհիւ, միւսներինը աւելի ծանր է լինում:

Ուստի պարագիտային հիւանդութիւնը ուսում-
նասիրելիս պէտք է ի նկատի ունենալ ոչ միայն
պարագիտը, այլ և այն հողը, որի վրայ նա զար-
գանում է:

Նախ պէտք է ի նկատի ունենալ, թէ միկրո-
ների վարակիչ ուժը շատ փոփոխական է որոշ
պայմանների ազդեցութեան տակ:

Սյսպէս կլիման, տաքութեան աստիճանը,
մթնոլորտի փոփոխութիւնները և խոնաւութիւնը
ըստ երեւոյթին բաւական ազդում են որ և է անձնա-
ւորութեան վարակուելու տրամադրութեան վրայ:

Բացի սրանից վարակուելու տրամադրութիւնը,
ինչպէս երևում է, կախումն ունի երկու գլխաւոր
պատճառներից:

Առաջինը անհատական այնպիսի յատկութիւն-
ներն են, որոնք հետեանք են ժառանգականութեան
կամ անհատի նախկին կենցաղավարութեան:

Իրանք ստեղծում են օրգանիզմի մի այնպիսի
գրութիւն, որով նա տրամադիր է դառնում այս
կամ այն հիւանդութիւնն ստանալու:

Երկրորդ պատճառը ժամանակաւոր փոփոխու-
թիւններն են, որոնց ենթարկւում է օրգանիզմը
հասակի, զրկանքների, նախկին հիւանդութիւնների
ազդեցութեամբ:

Սյր փոփոխութիւնները ազդում են մարմնի
քիմիական կազմութեան վրայ և անցողակի կերպով
աւելացնում կամ պակսեցնում են որ և է հիւան-
դութեամբ վարակուելու ընդունակութիւնը:

2.

Պարագիտները օրգանիզմի մէջ մտնելով կարող
են զանազան կերպով կաշու հիւանդութիւններ
առաջ բերել:

Պարագիտների ամենասովորական ու ամենա-
յաճախ ներգործութիւնը կայանում է նրանում, որ
նրանք անմիջապէս ազդում են կաշու վրայ՝ կպած
տեղերում:

Բայց յայտնի է, որ բակտերիաները օրգանիզմի
մէջ մտնելով, կարող են մնալ նոյն վարակուած
տեղում և կամ տարածուել օրգանիզմի մէջ՝ արիւ-
նատար և աւշային անոթների միջոցով:

Սյր դէպքում վարակում է ամբողջ օրգանիզմը:

Վարակուել կարելի է և ուրիշ ճանապարհով:

Վիրաւորելով կաշին, պարագիտները կարող
են հիւանդի անհատական տրամադրութիւնը զրգուել
և պատճառ դառնալ մի քանի կաշուային հիւանդու-
թիւնների:

Կաշու այն հիւանդութիւնները, որոնք առաջ են դառնիս պարագիտաներից անկախ, ուրիշ արտաքին պատճառներից, բաժանուում են խմբերի, նայած, թէ կաշու հիւանդային փոփոխութիւնները մեքենայական զրգուումից են առաջ եկել, թէ քիմիական կամ ուրիշ թունաւորիչ նիւթերի ազդեցութիւնից:

Այս դէպքում էլ, ինչպէս և պարագիտով հիւանդանալու ժամանակ, պէտք է ի նկատի ունենալ հետեւեալ պայմանները:

1) Վիրաւորիչ գործարանի հասցրած հարուածը օրգանիզմին:

2) հիւանդացած տեղով թունաւոր նիւթերի մանելը օրգանիզմի մէջ:

3) Անհատի ընդունակ լինելը այս կամ այն կաշուային հիւանդութեան համար:

է.

Ամենքին յայտնի է, որ իբրև կերակուր ծառայող նիւթերից մի քանիսը ցան են առաջ բերում այն մարդկանց վրայ, որոնք տրամադիր են այս տեսակ հիւանդութիւնների:

Այսպէս շատ անգամ կարելի է նկատել, որ սմանք ելակ (կլուբնիկա) ուտելու պատճառով տենդ են ստանում:

Սուր համով պանիրը կարող է առաջ բերել երեսի ցան:

Բժիշկներին լաւ յայտնի է, որ շատ դեղեր կարող են զանազան տեսակ ցաներ առաջ բերել:

Բուսական է այստեղ յիշել եօղի, բրօմի, սնդիկային խառնուրդների, քինաքինայի և ուրիշ դեղերի առաջ բերած ցաները:

Այդ տեսակ ցաները ուսումնասիրելու ժամանակ աւելի աչքի է ընկնում այն դերը, որ ունի անձնաւորութեան հակումը կաշու հիւանդութեան հարցում:

Այդ դէպքում պէտք է նկատել նախ՝ մշտական և երկրորդ՝ անցողական հակումը:

Հակումը անցողական կոչում է այն ժամանակ, երբ մի անձնաւորութիւն, որ առաջ կարող էր տանել այս կամ այն նիւթը որոշ քանակութեամբ, յսուկարծ չի կարողանում տանել նոյն քանակութեամբ և ընդունելիս կաշու վրայ ցաներ են առաջանում:

Մարմնի որոշ գործարանները կարող են հիւանդային փոփոխութիւնների ենթարկուել բեֆլէքսի (անդրադարձման) կամ ընդհանուր առողջութեան հետզհետէ զարգացող խանգարման պատճառով:

Ձանազան օրգանների քրոնիքական հիւանդութիւնները կարող են տարբեր կերպով ազդել կաշու վրայ. օրինակ՝ երիկամունքի, ստամոքսի, լեարդի, սեռամիզական անդամների կամ արգանդի հիւանդութիւնների ժամանակ—կաշու հիւանդութիւններն էլ տարբեր են լինում:

Իսկ ինչ վերաբերում է նեարդային սիստեմի խանգարումներին, պէտք է ասել, որ նրանք շատ մեծ ազդեցութիւն ունին կաշու հիւանդութիւնների վրայ:

Նեարդային խանդարումներից առաջացած կաշու հիւանդութիւնների շրջանն օրէցօր աւելի ընդարձակուում է:

Մանդի չափազանց շատութիւնը կամ պակասութիւնը, ուտելիքի վատ յատկութիւնը կամ վատ մարսուելն ու ծծուելը, թոքերի, երիկամունքների խանգարումները—այս բոլորը պատճառ են դառնում օրգանիզմի մէջ զանազան թոյներ հաւաքուելուն:

Սյդ թոյները զանազան անձնաւորութեանց վրայ զանազան տեսակ ցաներ են առաջ բերում:

Պօղազրան—ընդհանուր օրգանիզմի մի հիւանդութիւն է, որի ժամանակ հիւանդանում են գլխաւորապէս ոտքի բուժ մատի յօդերը:

Ընդհանրապէս այդ հիւանդութիւնը առաջ է դալիս շատ սննդարար նիւթեր ընդունելուց, նսասկեաց կեանքից և գլխաւորապէս հարուստների բաժինն է կազմում:

Շատ անգամ պատահում է, որ պօղազրայի ցաւերից տանջւող հիւանդը յանկարծ կաշու սուր հիւանդութիւն էլ է ստանում:

Նրա կաշին կարմրում, բորբոքւում է, ծածկւում է բշտիկներով, կարծես թէ այրուած լինի, իսկ մի քանի ժամանակից յետոյ—երկուսից մինչև վեց շաբաթ—ամեն ինչ անցնում է և ապա միևնոյն նշանները նորից կրկնւում են շատ կամ քիչ ժամանակից յետոյ:

Պարզ է, որ այս դէպքում կաշու հիւանդութիւնը առաջ է եկել պօղազրայից:

Երբեմն էլ պատահում է, որ միևնոյն անձնաւորութեան կաշու հիւանդութիւնները, որ արտայայտւում են ցանով, երևում են ներքին որոշ հիւանդութիւնների հետ միասին. օրինակ՝ սաստիկ անդարի (միզրեն), երիկամունքի ու մաղձային քարերի և յօդերի ու մկանունքների ցաւերի հետ:

Ը.

Ինչ պէտք է Հասկանալ հիւանդութեան հող և հակումն, այսինքն նախատրամադրութիւն ասելով:

Սյդ հողը բաւական բարդ պայմաններից կախումն ունի:

Նախ և առաջ նա կազմւում է այնպիսի յատկութիւններից, որ մարդ ժառանգաբար ստանում է ծնողներից: *)

Կան ընտանիքներ, որոնց մէջ միևնոյն հիւանդութիւնները ու ֆիզիքական արատները սերունդից սերունդ են անցնում: միևնոյն է, թէ այդ ժառանգականութիւնն արդեօք ուղիղ թէ կողմնակի կերպով անցնում, անընդհատ է, թէ ընդհատութեամբ:

Սյդ հակումը կամ ծածկուած, անգործ է մնում և կամ պարզ երևում է, նայելով այն պատահական պայմաններին, որոնց ենթարկւում է անձնաւորութիւնը հիւանդութեան զարգացման նկատմամբ:

Պարզ է, որ այդ ժառանգական հակումը, աւելի կամ պակաս չափով կ'արտայայտուի, նայելով՝ թէ

*) Տես Ի. Բ. Բուրուզեան «Մեր նեարդերը» և «Ճառանգականութիւն և դաստիարակութիւն»:

ի՞նչ դրութեան մէջ էին ծնողները յղութեան ժամանակ:

Առողջապահական կանոնների զանցառութեան, պատահական կամ ծանր քրոնիքական հիւանդութիւնների պատճառով կարող են մարդու օրգանիզմի մէջ հաւաքուել այսպէս սասած՝ զանազան թոյներ:

Որքան շատ լինին այդ թոյները ծնողների օրգանիզմի մէջ, նոյնքան էլ որոշ կերպով կարտայայտուի ժառանգականութիւնը զաւակների վրայ:

Յամենայն դէպս հաստատ է, որ երեխաները կարող են իրանց ծնողներից այնպիսի դրութիւն ժառանգել, որ նրանց դէմքին դեռ երիտասարդ հասակից դալիութիւն է տալիս, դարձնում է թոյլ, նրանց տրամադրում է քրոնիքական հարբուխ և աչքի հիւանդութիւններ ստանալու:

Այդպիսի երեխաների ականջից վազում է թարախ, կոկորդը յաճախ ցաւում է, կաշին յաճախ դուրս է աւլիս, մի խօսքով՝ հիւանդային այնպիսի երեւոյթներ են առաջ դալիս, որոնք կոչում են ընդհանուր անուևով գեղձախտ *) կամ աւելի ճիշտ սասած լիմֆատիզմ:

Երեխաները իրանց ծնողներից կարող են ժառանգել նաև տրամադրութիւն անդարի (միզրէն), լեարդի, երիկամունքի, էքզեմայի, ներքին գործարանների հիւանդութեան, մի խօսքով տրամադրութիւն գէպի այնպիսի հիւանդութիւններ, որ ընդունած է անուանել սննդառութեան զանդաղումն — առարիտիզմ:

*) Տես «Գեղձախտ» Ի. Ժ. Լ.: Իւուդուգեան:

Բացի ժառանգական տրամադրութիւնից՝ ամեն մի մարդ ունի նաև որոշ անձնական յայտութիւններ էլ, որոնք նրա օրգանիզմը տրամադրում են կաշու որ և է հիւանդութեան՝ զանազան ազդիչների միջոցով (իդիօսինկրազեա):

Այսպիսի դէպքերում հիւանդանալու պատճառը մարդուս բուն անհատական առանձնայատուութիւնների մէջ պէտք է որոնել:

Նա կարծես թէ հէնց իւր կազմուածքի շնորհիւ կաշու մի որևէ տկարութեամբ հիւանդանալու մշտական վտանգի մէջ է գտնուում, այնպէս որ բաւական է պատահական մի առիթ, որպէսզի հիւանդութիւնը երևան գայ:

Այս խիստ տարօրինակ տրամադրութիւնը մեծ մասամբ բնածին է լինում, բայց նա կարող է լինել և ստացական:

Այսպէս, օրինակ՝ գեղձախտային դրութիւնը կարող է առաջ գալ նորածնին առողջապահական վատ պայմանների մէջ պահելուց, անբաւարար սնունդից և լոյսից:

Արտրիտիզմը կարող է զարգանալ նոյնպէս առողջապահական կանոնները չպահելուց, շարժութեան պակասութիւնից, չափազանց սնունդ ընդունելուց և այլն:

Վերևում ասացինք, որ նեարդային համակարգութեան, մարսողութեան գործարանի, սրտի, երիկամունքների հիւանդութիւնները նպաստում են կաշու հիւանդութիւնների զարգացմանը:

Այս բոլոր պայմանները ի միասին առած կոչուում են հակումն—նախատրամադրութիւն և պատրաստի հոգ:

Մարդս կաշու զանազան հիւանդութիւնների է ենթարկուում իր հասակի համեմատ:

Մանկութեան հասակում լինում են վերնամաշկային—էրիդէմատոզային ցաներ և էքզեմային, մանաւանդ ատամների դուրս գալու ժամանակ:

Գլխի քոսը (պարշայ) նոյնպէս յատուկ է մանկական հասակին:

Սեռական հասունութեան շրջանում երեւում են ակնէ—(երեսի ցան, պալար) և սեբորրէա—ճարպոտ բշտիկներ:

Հասունացած հասակում կաշու հիւանդութիւնները աւելին ենարդային խանգարումից են առաջ գալիս. իսկ աւելի ուշ առաջ է գալիս էպիտելոմա—կաշու խլուրդ (րակ) և այլն:

Կաշու հիւանդութիւնը կարող է առաջ եկած լինել նաև պարազիտներից, բայց նրա արտաքին նշանները, նրա զարգացման ընթացքը փոփոխուում է նայած այն հողին, որի վրայ նա զարգացել է, ուստի բաւական չէ միայն պարազիտի վրայ ուշադրութիւն դարձնելը, պէտք է ի նկատի ունենալ և հողը:

Եթէ հողը բոլորովին անբարեյաջող է, պարազիտը ամենեւին չի զարգանում, իսկ եթէ հողը բարեյաջող է—նա անարգել աճում է, կամ թէ բաւական է մի պատահական հանգամանք, որ հողը պատրաստ լինի:

Այսպիսի դէպքերում վերաւորուած տեղը (տրաման) մեծ դեր է խաղում: նա կամ պատուաստում է մարմինն պարազիտ և կամ թէ մարդու կազմուածքը անպիսի ընդհանուր փոփոխութեան է երթարկում, որ նա նպաստաւոր է լինում պարազիտի զարգացման համար:

Թ.

Կաշու հիւանդութեան մասին այս կամ այն գուշակութիւնն անելիս պէտք է միշտ աչքի առաջ ունենալ վերոյիշեալ բոլոր հանգամանքները:

Այդ գուշակութիւնը կախումն ունի հողից, հիւանդի կազմուածքից, նրա առողջութեան նախնական դրութիւնից, նրա գործարանների աւելի կամ պակաս կանոնաւոր գործունէութիւնից, զբաղմունքի ժամանակ առողջապահական կանոնները պահպանելուց, նրա հոգեկան դրութիւնից, հասակից ու սեռից:

Կաշու պարազիտային հիւանդութեան դէպքում էլ հողը մեծ դեր է խաղում:

Այսպէս օրինակ լուպուսի (վոլչանկա) ժամանակ միշտ կարելի է բարեյաջող ելք գուշակել, եթէ միայն հիւանդի կազմուածքը առողջ է, եթէ հիւանդը ինքն իրեն կամ ժառանգաբար սորամաղիր չէ թոքախտով, բարակացաւով հիւանդանալու. հակառակ դէպքում լուպուսը կարող է արագ-արագ տարածուել մօտակայ գործարանների վրայ, վարակել ներքին գործարանները և վերջապէս մահ պատճառել:

Գործնական կեանքի մէջ շատ անգամ է պատա-

հում, որ բժիշկը հիւանդութիւնը չի կարողանում որոշել, թէ և ձեռնարկում է բժշկել:

Բժշկութեան այդ ձևը սխալ ձև է, բայց կաշու հիւանդութիւնների ժամանակ շատ անգամ անխուստփելի:

Եթէ այսպէս է, ուրեմն ինչ պիտի լինի հիւանդի դրութիւնը, եթէ նա ինքն իրան է բժշկում և կամ նոյն իսկ ոչ բժշկի խորհրդով:

Եւ յիրաւի, շատ անգամ են պատահում կաշու այնպիսի անորոշ հիւանդութիւններ, որոնց բնաւորութիւնը բոլորովին անյայտ է, այնպէս որ բժիշկը ստիպուած է լինում միայն իր ենթադրութիւնների հիման վրայ բժշկել, թէ և նա միշտ հնարաւորութիւն ունի քննել հիւանդի ամբողջ ֆիզիքական կազմուածքը:

Բայց շատ սակաւ է պատահում, որ հմուտ սօքը չկարողանայ որոշել հիւանդութեան բնաւորութիւնը, նրա ընթացքն ու բժշկութիւնը:

Շատ յաճախ հիւանդները սաստիկ ամաչում և ճնշում են երբ բժիշկը պահանջում է բոլորովին մերկանալ:

Շատ անգամ հիւանդը ինքն ցան չի նկատում իր մարմնի որ և է մասում, այն ինչ այն ցանը մեծ նշանակութիւն ունի, որովհետեւ բժշկին հնարաւորութիւն է տալիս ճշտութեամբ որոշելու հիւանդութիւնը:

Այն այդ պատճառով բժիշկը չի կարող բաւականանալ, երբ հիւանդը ցոյց տալով իւր մարմնի այն մասը, որտեղ իրան անհանգստացնող

ցանն է դանոււմ, հաւատացնում է, թէ իր մարմնի վրայ այլ ևս ոչինչ չկայ:

Ընդհանրապէս կարող է, արդեօք, ոչբժիշկը մի բան անել այդպիսի դէպքում:

Մարմնի դուրս տուածի բոլոր յատկութիւնները լաւ որոշելու համար բաւական չէ մի միայն նրա ձևը, գոյնը, դրութիւնը և դասաւորութիւնը դիտել—այլ անհրաժեշտ է շփել, շոշափել նրան, հիւանդ կաշին սեղմել մասների մէջ, որպէսզի իմացուի նրա չորութիւնն ու թացութիւնը, առաձգականութիւնը, կարծրութիւնը և այլն:

Անհրաժեշտ է իմանալ, թէ արդեօք հիւանդութիւնը կաշու վերին մասումն է, թէ աւելի խորն է վնասել արտաթորումն կայ, թէ ոչ, կեղև է առաջ դալիս, թէ թեփ. ջերմութեան աստիճանը Հիւանդ տեղում բարձրանում է, թէ ոչ, նկատելի է արդեօք զգայնութեան փոփոխութիւն և այլն:

Պէտք է դիտել դուրս տալու ընթացքը, նրա տարածուելու եղանակը և զլխաւոր ուշադրութիւնը դարձնել այն բանի վրայ, թէ արդեօք մարմինը համաչափ է դուրս տուել, թէ ոչ, որոշ դէպքերում պէտք է դիմել նաև խոշորացոյցի օգնութեան:

Փ.

Ցանի ընդհանուր դասաւորութիւնն էլ շատ մեծ նշանակութիւն ունի հիւանդութիւնը որոշելիս. համաչափ դուրս տուածը չպէտք է տեղիք տայ մեզ կարծելու, թէ կաշու հիւանդութիւնը առաջ ց կէլ արտաքին պատճառներից:

Բայց այս կանոնից պէտք է բացառութիւն համարել կաշու մի քանի հիւանդութիւններ, օրինակ՝ քոսոտութիւնը (չեսոտկա):

Դարձնեալ չպէտք է ի նկատի առնել և այն դուրս տուածները, որոնք առաջ են դալիս գրգռող հագուստից:

Դրանց բնորոշ յատկութիւնն այն է, որ միայն զգեստի շփուած տեղերում են լինում և ոչ թէ մարմնի բաց տեղերում:

Նշանակութիւն չունին և այն դուրս տուածները, որոնք առաջ են դալիս, երբ մարմնի մասերը շփուում են զրգռիչ իրերի հետ, ինչպէս օրինակ հացագործների, վառարան շինողների, փորագործների և ուրիշ արհեստաւորների վրայ:

Գլխաւորապէս նոցա ձեռներն են դուրս տալիս, մանաւանդ դաստակները:

Եթէ միայն ձակասն է դուրս տուած լինում, իսկոյն եզրակացնում ենք, թէ դա առաջ է եկել դլխարկի, քողի, կամ կեղծ ծամի գրգռելուց. վրէ վրայ ազդում են նեղ օձիկները, ականջի վրայ՝ օղերը և այլն:

Չհաշուելով այս առանձին հանդամանքները և դրանից էլ աւելի պակաս նշանակութիւն ունեցողները, որոնց հաշուելը մեզ շատ հեռուն կտանէր, նկատենք, որ մարմնի համաչափ (սիմմետրիա) դուրս տալը ընդհանրապէս ներքին հիւանդութեան նշան է:

Ընդհակառակը ոչ-համաչափ դուրս տուածը առաջ է դալիս կամ պարազիտներից կամ արհեստական գրգռումից՝ արտաքին պատճառներից:

հիւանդութիւնը որոշելու համար սեռն էլ մեծ նշանակութիւն ունի:

Եթէ հիւանդը պատկանում է իգական սեռին այն ժամանակ անհրաժեշտ է իմանայ, թէ կանոնաւոր է արդեօք նրա դաշտանը, արիւն շատ է հոսում, թէ սակաւ. արդեօք դաշտանի երեւալուց առաջ արիւն հոսել է, թէ ոչ, արդեօք յղութեան նշանն էր չկան, առաջ նա յղեացել է թէ ոչ երեխայ վիժել է, մօտ է արդեօք նրա սեռական հասունութիւնը և այլն:

Մի խօսքով՝ հիւանդութիւնը ճշտութեամբ որոշելու համար անհրաժեշտ է քննել սեռական գործարանները, բերանը, սննդառութեան գործարանները, երիկամունքները, նեարդային համակարգութիւնը, անձնաւորութեան ընդհանուր կազմուածքը, նրա սովորութիւնները, կենցաղավարութիւնը, սննդառութիւնը, կաշու և ընդհանրապէս առողջապահական պայմանները և այլն:

Այս բոլոր տեղեկութիւնները հաւաքելով միայն կարելի է հիւանդութիւնը որոշել, նրա հետեւանքը գուշակել և դրա համեմատ դիմել բժշկելու պէտք եղած միջոցների: Այս բոլորը բժշկի գործն է, նրա աստուածային արհեստն է:

ԺԱ.

Մեր բոլոր ասածները ապացոյց են, որ կաշու հիւանդութիւնը բժշկելու ժամանակ պէտք է գործադրել թէ ներքին և թէ տեղական բժշկական միջոցներ:

Կան առանձնապէս տեղական հիւանդութիւն-

ներ, վերական—տրամադրական կամ պարազի-
տային, որոնք չեն ազդում ընդհանուր առողջու-
թեան վրայ և նրանց համար բաւական է տեղա-
կան բժշկութիւնը:

Ընդհակառակը կան այնպիսի հիւանդութիւն-
ներ (ցանոտ աէնդ, մօլլոքուր), որոնց դէմ տեղական
բժշկութիւնը ընդհանրապէս ազդեցութիւն չունի:

Վերջապէս կան և այնպիսի յաճախ պատահող
և լուրջ հիւանդութիւններ, երբ պէտք է դիմել
միաժամանակ երկու միջոցներին էլ:

Թողնենք կաշու հիւանդութիւնների բժշկու-
թիւնը բժշկին, աւելի լաւ է մի քանի խօսք ասենք
կաշու առողջապահութեան մասին:

Առողջապահութեան դիտաւոր կանոններից
մէկն այն է, որ ուշք դարձնենք կաշու կանոնաւոր
գործունէութեան վերայ և խիստ մաքուր պահենք:

Հին ազգերի համար ջուրը անգնահատելի մի
տարր էր և կրօնները աշխատում էին բանաստեղ-
ծօրէն ներկայացնել սրբազան լուացումները:

Յոյները հիւրասիրութեան սրբազան պարտա-
կանութիւններից մէկն էին համարում բաղանիքը:

Հռովմայեցիք իրենց բաղանիքները հասցրին
վերին աստիճանի նուրբ շքեղութեան:

Հրէաների մէջ Մովսէսը և արարների մէջ
Մահմեդը չափազանց մեծացրին լուացումների
թիւր, իբրև բարոյական մաքրութեան նշան:

Իսկապէս դրա պատճառն այն էր, որ այդ մեծ
մարդիկը շատ լաւ էին զգում ջրի առողջապահական
ազդեցութիւնը, մանաւանդ տաք երկիրներում, որ-

տեղ ջուրը կաշու համար նոյնն է, ինչ որ օդը
թոքերի համար:

Այս կերպով հեշտութեամբ կարելի է ազատ
մնալ կաշու շատ տեսակ հիւանդութիւններից,
որոնցով ընդհանրապէս հիւանդանում են անմաքրա-
սէր ու փնթի մարդիկ:

Այդ միւսնոյն միջոցով հեշտանում է կաշու
գործունէութիւնը, որը այնքան մեծ նշանակութիւն
ունի մեր առողջութեան համար:

Լուացուելու համար պէտք է գերադասել
եռացրած ջուրը. կարելի է լուացուել և անձրևի
ջրով:

Տաք ջուրը կաշին աւելի լաւ է մաքրում, իսկ
սառը պնդացնում է նրան և աւելի դիմացկուն է
դարձնում—ցրտի դէմ:

Կաշին աւելի լաւ մաքրելու համար կարելի է
սապոն գործ ածել:

Ամենօրեայ գործածութեան համար լաւ է
ձարպով սապոնը, քան թէ հոտաւէտը:

Ում մարմինը չի սիրում սապոն, նա պէտք է
մի աման ջրի մէջ խառնէ մի ամբողջ թէի դրալ
բորա (բուրա) և դրանով լուացուի. այդ խառնուրդի
գործածութիւնը շատ առողջարար է:

Քնելուց առաջ պէտք է լուացուել տաք ջրով,
իսկ առաւօտները սառը ջրով:

Եթէ լուացուելուց յետոյ կաշին չորանում
կամ ձգւում է, այն ժամանակ սապոնը շատ չափաւոր
պէտք է գործածել և լուացուելուց յետոյ կաշուի
վրայ մի որևէ իւղային նիւթ քսել:

Այս նպատակով գործածուում են ջրի հետ կիսով չափ խառնած գլխերին. ցանկացողը հասարակ ջրի տեղ կարող է վարդի կամ նարնջի ջուր գործածել:

Սովորական առողջապահական վաննաները— տաք և սապոնով վաննաներն են:

Նոցա տաքութեան աստիճանը պէտք է տատանուի լողացող անձնաւորութեան համեմատ 26⁰—28⁰, այնպէս որ ոչ շատ տաքութիւն զգացուի և ոչ էլ շատ սառնութիւն:

Վաննայում կարելի է նստել 15-ից մինչև 20 րոպէ:

Առանձնապէս մի քանի զգայուն կաշիների համար հարկաւոր են թեփով կամ օսլայով (կրախմալ) վաննաներ, իւրաքանչիւրի մէջ 1—2 ֆունտ:

Ճարպոտ կաշիները պահանջում են ալկալեան (չէլոջնի) վաննա. որի մէջ լինելու է ¹/₂-ից մինչև ³/₄ ֆունտ սոդա:

Շիտաւոր—(ուգոի)—կաշու վրայ—(օր. մէջքի, կուրծքի)—շատ լաւ է ազդում ծծմբային վաննան:

Շփումն ու մասաժը նոյնպիսի առողջարար նշանակութիւն ունին, ինչ որ լուացուելն ու վաննան:

Ջրի նշանակութիւնը շատ մեծ է և իւրաքանչիւր քաղաքի ու գիւղի համար առաջին պարճանքը պէտք է լինին բաղանիքները. չքաւորների համար մուտքը պէտք է ձրի լինի կամ ճնչին վճարով:

Թող բաղանիքների մասին հոգալն էլ քաղաքային ինքնավարութեան էական պարտականութիւններից մէկը լինի, որովհետև քաղաքները կարող

են ունենալ էժանագին, կամ աւելի լաւ է բոլորովին ձրի հասարակական բաղանիքներ—աղքատների համար:

Հապա կոյուղին (կանալիզացիան...)

Արտասահմանի շատ քաղաքներում կան ձրի բաղանիքներ ու լողարաններ, առանձնապէս ուսանող երիտասարդութեան համար:

Որտեղ ծաղկում են առողջապահական պայմանները, այնտեղ հիւանդանոցներ չեն շինում:

Օրէնքը թոյլ է տալիս, որ քաղաքների և գիւղերի առողջապահութեան վրայ հսկելու համար առանձին հոգաբարձութիւններ ընտրուին:

Ու՞ր են ուրեմն ժողովրդի բարեկամները:

ԺԲ.

Ասածներս լրացնելու համար այժմ պէտք է անցնենք անդի առողջապահութեանը, որ նոյնպէս մեծ դեր է խաղում կաշու մի քանի հիւանդութիւնների վերաբերմամբ:

Ուտելիքները զանազան կերպով կարող են ազդել կաշու վրայ, կամ ընդունուելուց յետոյ անմիջապէս և կամ դանդաղ կերպով:

Եթէ մի որ և է կերակուր կաշու հիւանդութիւն է պատճառում, այն ժամանակ մարդ բոլորովին պիտի հրաժարուի այդ կերակուրն ուտելուց:

Զգայուն կաշի ունեցող մարդիկ չպէտք է ուտեն ծովային ձկներ, օրինակ՝ սարգինկա, հարինգ (սելեօզկա), նոյնպէս խեցգետին, սղած ու խորոված միս, խոզի միս, կծու պանիր և այլն:

Սուրճն ու թէյը, լիքեօնն ու մի քանի պտուղներ, մորին (մալինա), կաղամբը նոյնպէս կարող են կաշու եռքը սաստկացնել ու պահպանել:

Կան մարդիկ, որոնց վնասում է վերոյիշեալ ուտելիքներից մէկն ու մէկը, ուստի ամեն մարդ պարտական է իմանալ իր առանձնայատկութիւնը (իդիոսինկոեզիա):

Ոմանք ճարպոտ կերակուր չեն կարողանում տանել, իսկ ոմանք էլ իւրոտ:

Մէկին քիչ եփած միսն է վնասում, երկրորդին սաստիկ համեմած սօսւսը, երրորդին—գազոտ ջրերը և այլն:

Շատ դժուար է հիւանդին համոզել, որ նա չգործածէ այնպիսի ուտելիքներ, որոնց վնասակար ազդեցութիւնը կամաց-կամաց է երևում, այն ինչ այդ քրոնիքական թունաւորումներն են ամենից վտանգաւորը:

Այս էլ պէտք է ասել, որ դժբաղդաբար շատ մարդիկ ճաշում կամ ընթրում են առանց ձեռքերը լուանալու, մրգեղէն են ուտում առանց լուանալու կամ սրբելու, յաճախ համբուրւում են շների ու կատունների հետ և այլն:

Պարզ է, որ այդպիսի անսաքրութիւնը վնասակար է, որովհետեւ կարող է աղիքների մէջ զանազան որդեր առաջացնել, այդ որդերն էլ կարող են իրանց կողմից պատճառ դառնալ զանազան ցանների և կաշու ուրիշ հիւանդութիւնների:

Վերևում ասացինք, թէ մարմնի դուրս տալը մի քանի դէպքերում սերտ կապ ունի արտրիտի

(պոդագրայի) հետ. միւս կողմից էլ յայտնի է, որ վատ սնունդը մի քանի ժամանակից յետոյ կարող է պոտագրայի նշաններ առաջ բերել այն մարդկանց վրայ, որոնք նախատրամադիր են այդ հիւանդութեան:

Պոդագրա ունեցողները մարմնի դուրս տալուց խուսափելու համար իրանց հեռու պէտք է պահեն թունդ սուրճ, լիքեօններ, դինի և ուրիշ ոգելից բնույթիներ, աւելուկ, ոսկեամբուկ (տօմադ) գործածելուց:

Նոցա սնունդը պէտք է բաղկացած լինի կաթից, ջրից, կանաչեղէնից. դրանք կարող են օր-մէջ սպիտակ միս ուտել:

Հասկանալի է, որ այստեղ մեծ դեր է խաղում բաց օդում շարժողութիւններ կատարելը, Ֆիզիքական աշխատանքը, հոգեկան հանգստութիւնը և ուրիշ պայմաններ, օրինակ՝ դիւղական կեանք, ամեն տեսակ յոգնածութիւնից ու աւելորդութիւններից խուսափելը և այլն:

Իսկ հիւանդութեան ընթացքում բժշկի գործն է ջրաբուժութիւն, հանքային ջրեր, էլեքտրակասութիւն նշանակելը:

Այժմ մի քանի խօսք էլ մազերի մասին ասենք: Մազը մշտական—մնայուն կեանք չունի. նա շարունակ փոփոխւում ու նորոգւում է, կամ ուրիշ խոսքով ասած՝ նա ապրում է ծաղկի նման:

Մազը չի կարող աճել, եթէ նրա արմատը փչանում է մի որ և է հիւանդութեան, ծերութեան,

անփոյթ հոգատարութեան կամ ժառանգական նախատարամարդութեան պատճառով:

Մազերի վաղաժամ սպիտակելուն պատճառէն լինում վեշտը, տանջանքը, Ֆիլիքական կամ մտաւոր ծանր աշխատանքը, անառակ կենցաղավարութիւնը և այլն *):

Գլխի մազերի խտութիւնը լինում է զանազան աստիճանի. այսպէս՝ շիկահեր (բլօնդին) մարդիկ մի քառակուսի մատաչափի վրայ ունենում են միջին թուով 800 մազ, շականակադոյն մազերով մարդիկ—շատէն—600, թխահեր մարդիկ բրինետ —575 և վերջապէս բոլորովին շէկ մարդիկ—500:

Իրանից կարելի է եզրակացնել, որ ամենապինդը շէկ մազերն են:

Օդի մէջ կայ բաւականաչափ փոշի, որը պարունակում է զանազան վարակիչ նիւթեր:

Այդ նիւթերը կպչում են ճարպոտ մազերին և ապա նստում կաշու վրայ, նրա վերնամաշիկ կեղևիկների հետ միասին կազմելով գլխու թեփը:

Այդ թեփը երբեմն կազմում է մի ամբողջ շերտ, որը գլխի կաշու համար անմատչելի է դարձնում օդը և այդպիսով փնասում է նրա գործունէութեանը, զրկելով օդի բարերար ազդեցութիւնից:

Թեփոտութեան առաջն առնելու համար հարկաւոր է գլուխը տաք ջրով (26⁰-28⁰) լուանալ:

*) Մօտ ժամանակներս Փարիզի յայտնի պրօֆ. Մեչ-նիկովը հրատարակեց մի նոր ուսումնասիրութիւն մազերի մասին: Այդ ուսումնասիրութեան մասին մենք կ'սօսենք առաձին—«Վաշու հիւանդութիւններ» գրքոյկի մէջ:

Պէտք է գործ ածել մի որ և է քնքոյշ սապոն, օրինակ «Մարսելեան սապոն»:

Կարելի է շաքաթը մէկ անգամ մազերին օղի քսել—գիշերը քնելուց առաջ:

Սառը և չափազանց տաք ջուրը փնասակար է գլխու համար, որովհետև նպաստում է մազերը շուտ թափուելուն:

Շատ փնասակար է գլուխը եղունգներով քորելը կամ աւելի ճիշտն ասած չանգուտելը—ինչպէս այդ անում են բաղանիքներում:

Սանրը պէտք է լինի գուտապերջից և ոչ մետաղից, մաքուր, առանգական և մազերի գոյնի համեմատ:

Գլուխը սանրելիս պէտք է հոգ տանել, որ մազերը չափոչկուեն, փնասակար է երբ մազերը դժուար են սանրուում և ցաւ են պատճառում:

Կանայք պէտք է իրենց մազերն այնպէս սանրեն ու հիւսեն, որ նրանց մէջ ազատ օդ շարժուի:

Սանրուածքը պէտք է լինի մազերի բնական ուղղութեան համեմատ:

Լաւ է ձեղքուածքը թողնել գլխի մէջ տեղը կատարից սկսած:

Սանրուածքի այդ ձևը գործածական է թէ Փրանսիայում և թէ Անգլիայում:

Վնասակար է երբ ունելի կամ մի այլ գործիք են գործ ածում մազերը ոլորելու և խոպոպներ կազմելու համար:

Խուզուելը կամ սափրուելը ոչ ուժեղացնում է և ոչ էլ արագացնում մազերի աճումը:

Իրանք միայն որոշ չափով գեղեցկացնում են մարդու տեսքը:

Օգտակար է մի տարուայ ընթացքում հինգ-վեց անգամ խուզուելը:

Անհրաժեշտ է գոնէ շաբաթը մի անգամ մազերը լուանալ գոլ ջրով, բայց ոչ տաք:

Շատ մարդիկ սովորութիւն ունին առաւօտները ջրով թրջել մազերը, բայց այդ բանը կարելի է անել միայն այն դէպքում, երբ լուացուելու ջուրը եռացրած է (բայց ոչ տաք):

Իսկ հում ջրով թրջելը ֆլասակար է:

Ծանր գլխարկները միշտ էլ ֆլասակար են, երբէք չպէտք է մոռանալ առողջապահական այն կանոնը, որ ասում է.

— Գլուխը պէտք է հով պահել, իսկ ոտքերը տաք:

Կաշու և մազերի չորութեան առաջն առնելու համար կարելի է գործածել օժանելիք:

Բայց այդ դէպքում պէտք է շատ զգոյշ լինել, որովհետեւ լրագրների մէջ շարունակ լոյս են տեսնում զանազան գովասանական յայտարարութիւններ այնպիսի օժանելիքների մասին, որոնք միայն ֆլաս կարող են պատճառել:

Հարկաւոր է միշտ հարցնել բժշկի խորհուրդը:

Դիւի չոր մազերի համար ամենալաւ օժանելիքն է նշի մաքուր ու թարմ իւղը, կամ պրօվանսի իւղը:

Սափրիչները պէտք է լինին չափազանց մաքրասէր:

Նրանց պարտականութիւնն է իւրաքանչիւր անգամ եռացրած ջրով կամ սպիրտով լուանալ ու սրբել իրենց գործիքները:

Ընտանիքի իւրաքանչիւր անգամ պէտք է ունենայ իր առանձին սանրն ու խողանակը:

Միշտ և ամեն տեղ պէտք է պահպանել մաքրութիւն:

Երեխային փոքր ժամանակից պէտք է վարժեցնել առողջապահութեան ու մաքրասիրութեան:

Չմոռանանք, որ մարմնի համար մաքրութիւնը նոյնն է, ինչ որ բարքի համար համեստութիւնն ու ժուժկալութիւնը:

Ուրեմն ի՞նչ պէտք է անենք, ինչն՞ց պէտք է փախչենք, որպէսզի Հիւանդանանք, կաշու հիւանդութիւն չստանանք:

Նախ և առաջ մեզանից ամեն մէկը, լաւ իմանալով, որ հիւանդութիւնների մեծ մասը առողջապահական կանոնները չպահելուց են առաջ գալիս, պէտք է աշխատի պահպանել այդ կանոնները:

Առողջապահական կանոնների խանդարումը առաջ է բերում մարմնի տկարութիւն, որը ազգում է ոչ միայն մեր, այլ և մեր բոլոր ժառանգների վրայ:

Մենք ի չարն ենք գործ դնում ալկոհոլը, խանդարում ենք սեռական մաքրութիւնը, բոլորովին հակառակ ենք դնում մտքի և դիտութեան պահանջներին, ուստի և փչանում, կորչում ենք:

Ուրեմն աւելի խելահաս լինինք և աւելի խստութեամբ վերաբերուինք դէպի մեր պարտականութիւնները:

Չարհամարհենք Ֆիզիքական առողջապահու-
թեան կանոնները, մաքուր պահենք մեր մարմինն
ու հոգին:

Միայն այդ միջոցով մենք կարող ենք հասնել
այն օրին, երբ մենք էլ, մեր սերունդն էլ, բոլորո-
վին առողջ և ուժեղ կլինինք:

Ուժեղացնենք մեր կազմուածքը, որովհետե
գոյութեան կռուի համար ոյժ է հարկաւոր:

Չմոռանանք, որ գիտութիւնն էլ ոյժ է:



թ

ու

այ

վն

ԳՅ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐԱՄԵԱՆՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՍԻ ԼՈՅՍ
ԵՆ ՏԵՍԵԼ, ՀԵՏԵԻԵԱԼ, ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒ
ԹԻԽՆԵՐԸ.

- 1. Բնօրնսօն կազմեց Ե. Թովչեան 10 կ.
- 2. Մահձեղ " " " " " 7 կ.
- 3. Սևարոյ Սաշտոյ կազմեց Ե. Թ. 5 կ.
- 4. Սահակ Պարթև " " " " " 5 կ.
- 5. Հառուպտան " " " " " 15 կ.

Շ առով լըյս են տեսնելու՝

- 6. Իբսէն.
- 7. Գօղօլ.

- ԳԻՄՆԷ՛**
- 1) *Ս.-Սետերբուրց:* Ивану Арамянцъ, Ямская 38.
 - 2) *Тифлис:* С. Абрамяну, Сергѣевская ул., контора Арамянцъ.
 - 3) *Бану:* Товарищество «Прометеусъ» Красноводекая ул., д. Амировыхъ.



ՀԵՂԻՆԱԿԻ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԱՇԽԱՏԱՆԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Լոռային օգնութիւն մինչև բժշկի գայը (սպառ.)	5 կ
2. Վարակիչ հիւանդութիւններ (սպառ.)	5 »
3. Ինչ է սիֆիլիսը (սպառ.)	5 »
4. Լոռայի պահպանողական զրոյցներ (սպառ.)	5 »
5. Ինչ է ժուժկալութիւնը (սպառ.)	5 »
6. Ինչ է անառակութիւնը (սպառ.)	5 »
7. Վեներական ատեր. (սպառ.)	5 »
8. Լճակերտի առողջապահութիւն (Թարգմ. սպառ.)	2 »
9. Մեր նեարդերը (սպառ.)	10 »
10. Սիֆիլիս (բարեփոխում. սպառ.)	10 »
11. Լոռայի հողին առողջ մարմնի մէջ (սպառ.)	10 »
12. Գեղձախտ. (զօլօտուխտ) (սպառ.)	10 »
13. Ո՞վ է յանցաւորը.	15 »
14. Կարիք և բարեգործութիւն	15 »
15. Ժառանգականութիւն և դաստիարակութիւն.	15 »
16. Սանկալարժական համառօտ զրոյցներ.	15 »
17. Սարմամարդութիւն (25 պատկերներով).	20 »
18. Լոռայի պահպանողական նուէր նորասի կանանց.	20 »
19. Կինը և տղամարդը.	15 »
20. Վիրաբուժական հիւանդութիւն և օպերացիա	5 »
21. Ինչ է կաշու հիւանդութիւնը	15 »

ԳԻՆՆ Է 15 ԿՈՊ.

Հետևեալ վեց գրքերը, որոնցից առաջին երկրորդ մամուլի տակից արդէն գուրս են եկել, տպուելուց յետոյ կիվաճառուին Լիւսալցիսայում հիմնուելիք հիւանդանոցի օգտին:

1. Կինը և տղամարդը.	15 կ.
2. Վիրաբուժական հիւանդութիւն և օպերացիա	5 »
3. Ինչ է կաշու հիւանդութիւնը	15 »
4. Լքրկարակեցութիւն.	15 »
5. Լոռայի և հիւանդ երեխայի ոգին	15 »
6. Սիֆիլիս և նեարդային հիւանդութիւններ	15 »

47.41

616

7-91